ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Արմեն Մինասյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2024թ. սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 4-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Վիեննայի միացյալ ինստիտուտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մակրոտնտեսական կառավարումը ռեսուրսներով հարուստ երկրներում» խորագրով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել են ռեսուրսներով հարուստ երկրներում հարկային ռեժիմների և հարկային թափանցիկության, տնտեսության վերլուծության, հարկաբյուջետային, դրամավարկային, փոխարժեքի, ինչպես նաև կառուցվածքային քաղաքականությունների առանձնահատկությունները, էներգետիկ համակարգի վերափոխումների հնարավորությունները և առկա մարտահրավերները:

5. Քննարկված թեմաները՝

1. Հումքային ապրանքների շուկաներ,
2. Տնտեսական աճ և բնական ռեսուրսներ,
3. Ներառական աճ և բնական ռեսուրսներ,
4. Տնտեսության բազմազանեցում և բնական ռեսուրսներ,
5. Պարզ հարկաբյուջետային քաղաքականության հենանիշներ,
6. Հարկաբյուջետային շրջանակները ռեսուրսներով հարուստ երկրներում,
7. Ազգային հարուստության հիմնադրամներ,
8. Դրամավարկային և փոխարժեքի ռեժիմները ռեսուրսներով հարուստ երկրներում,
9. Մակրոտնտեսական և ֆինանսական քաղաքականություններն՝ ուղղված ռեսուրսային հոսքերի կառավարմանը,

10. Հարկաբյուջետային ռեժիմները և բնական ռեսուրսների կառավարմանբ թափանցիկությունը,

11. Էներգետիկայի սուբսիդավորման բարեփոխումները,

12. Էներգետիկայի վերափոխման հնարավորությունները և մարտահրավերները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացը հետաքրքիր էր՝ հարուստ վերլուծություններով և դրանց վերաբերվող տեղեկատվությամբ:

Դասախոսությունները իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ: Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով: Կազմակերպվել են տարբեր խմբային աշխատանքներ և խաղեր:

Մասնակիցների կողմից ներկայացվել են նաև դասընթացն ամփոփող շնորհանդեսներ՝ կոնկրետ երկրների օրինակներով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ստացված գիտելիքները օգտակար և կիրառելի կլինեն եկամուտների քաղաքականության մշակման ընթացում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

08 հոկտեմբեր, 2024թ.